Նոր–Բայազէտ՝ 27,973 դաղթական — 7 պատգ. Վ. Քրմոյեան, Բ. Աբոյեան, Ա. Խաչիկեան, Մ. Գրիգորեան, բժ. Մուրատեան, Ա. Խոջայեան, Գ. Ասլանեան:

Կազմակերպիչ կոմիտէ՝ Գրիգոր Բուլղարացի, Սմբատ, Վ. Տէրոյեան, Ռ. Դրամբեան, Ա. Սասունի, Վ. Ցոխիկեան, Ց. Մխիթարեան, Ա. Կիտուր, Ն. Բուռնութեան:

Արևմտահայ խորհրդի անդամներից՝ բժ. Պոնապարթեան, Վան–Փուշ:

Հայաստանի խորհուրդ՝ Ս. Վրացեան:

Եղբայրական Օգնութեան կոմիտէ՝ Կորիւն վարդ. Սահակեան:

Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութիւն՝ Ե. Ցարութիւնեան:

Լորդ Մէյրբս կոմիտէ՝ Ս. Թոփալեան:

«Աշխատանք», «Վան–Տոսպ» թերթերից՝ Ա. Գաղանջեան, Ց. Վարդապետեան:

Այսպիսով, համագումարին մասնակցում էին 55 պատգամաւորներ: Պատգամաւոր չէին ուղարկել Սիսիանի, Ղամարլուի և Դարալագեազի դաղթականները: Բացակայում էին նաև Ղարաքիլիսայի 2 պատգամաւորները: Հրաւիրուած էին նաև Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ներկայացուցիչը, Անդրանիկը և ուրիշներ: Անդրանիկի մօտ ուղարկուել էր յատուկ մարդ՝ խնդրելով, որ անպատճառ ներկայ գտնուի համագումարին, բայց նա չէր համաձայնուել մասնակցել մի ժողովում, որը գումարուելու էր «թիւրքերի ձեռքով ստեղծած Հայաստանի» մայրաքաղաքում: Իր պաշտօնական նամակում (յունու. 25) նա գրում էր. «մտածելով, որ չեմ կրնար այդ համագումարին մասնակցելով օգտակար դառնալ և թեթևացնել ձեր աշխատանքները, ուստի հրաժարուում եմ ներկայ լինել այդ համագումարին»: Կաթուղիկոսը ուղարկել էր օրհնութեան կոնդակ և Գ. եպ. Զէորէքչեանին՝ ներկայացուցիչ իր կողմից: Շնորհաւորական նամակներ էին ուղարկել Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Հայաստանի Կենտր. Կոմիտէն և Հայ Ռամկավար կուսակցութեան Երևանի Շրջանային Վարչութիւնը:

Փետր. 4–ին և 5–ին տեղի ունեցած նախապատրաստական նիստերում կազմուեց համագումարի նախագահութիւնը — 3 նախագահներ՝ Գր. Բուլղարացի, Վ. Տէրոյեան և Վ. Քրմոյեան, երկու քարտուղարներ՝ Ա. Կիտուր և Ց. Վարդապետեան, լիազօրութիւնները քննող մարմին և 4 յանձնաժողովներ — շրջանների զեկուցումների, քաղաքական, ներդաղթի և հաշուեյարդար կազմակերպչական:

Համագումարի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հայ. Խորհրդի սրահում, փետր. 6–ին, Գր. Բուլղարացիի նախագահութեամբ: Կաթուղիկոսական կոնդակի ընթերցումից յետոյ, ողջոյնի ճառեր խօսեցին Ց. Քաջազնունին, որ յայտնեց կառավարութեան ցանկութիւնը՝ այս համագումարով վերացած տեսնել հայութեան հատուածական բաժանումը, Ս. Վրացեանը, Կորիւն վարդ.–ը, Ս. Թոփալեանը, Ե. Ցարութիւնեանը, Ա. Տէր–Յակոբեանը և Խաչիկեանը: Վ. Տէրոյեանը կարդաց մի զեկուցում համագումարի աշխատանքների մասին: Վ. Քրմոյեանը յարգանքի խօսք